Հավելված N 2
ՀՀ կառավարության 2022 թվականի
մայիսի 26-ի N 774 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔ ԿԱԶՄՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԳՅՈՒՏԵՐԻ, ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԴԻԶԱՅՆՆԵՐԻ ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՈՐՈՇՄԱՆ, ԴՐԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը սահմանված է պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկություններ պարունակող գյուտերի, արդյունաբերական դիզայնների (այսուհետ՝ արդյունաբերական սեփականության օբյեկտ) գաղտնագրման, գաղտնիության աստիճանի որոշման, գաղտնազերծման, դրանց օգտագործման և դրանց մասին տեղեկությունների հրապարակման հետ կապված հարցերը կարգավորելու նպատակով:

2. ԳԱՂՏՆԻ ՕԲՅԵԿՏԻ ՀԱՅՏԵՐՈՎ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ, ԳԱՂՏՆԱԳՐՈՒՄԸ, ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

2. Գաղտնագրման ենթակա արդյունաբերական սեփականության օբյեկտների հայտերը (այսուհետ՝ գաղտնի օբյեկտի հայտ), այդ թվում՝ «Արտոնագրերի մասին» օրենքի 58-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն ներկայացվող հայտերը, ներկայացվում են Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարության) մտավոր սեփականության գրասենյակ (այսուհետ՝ Գրասենյակ):

3. Արդյունաբերական սեփականության այն օբյեկտների հայտերը, որոնք ստեղծվել են պայմանագրի հիման վրա, այդ թվում՝ պետական մարմինների պատվերով հատուկ նշանակության արտադրանքի մշակման և արտադրման նպատակով, որոնք պարունակում են պետական կամ ծառայողական գաղտնիք, Գրասենյակ են ներկայացվում հայտատուի գաղտնի ռեժիմով աշխատող մարմինների միջոցով՝

տվյալ օբյեկտի գաղտնիության աստիճանի նշումով և առաքվում սահմանված գաղտնիության աստիճանին համապատասխան կարգով: Ֆիզիկական անձինք, անհատ ձեռնարկատերերը կամ կազմակերպությունները, որոնք կապված չեն հատուկ նշանակության արտադրանք մշակելու, ստեղծելու և(կամ) արտադրելու պայմանագրով, բայց իրենց տրամադրության տակ ունեն տեղեկություններ, որոնց բաց հրապարակումը, իրենց կարծիքով, կարող է վնաս հասցնել Հայաստանի Հանրապետության անվտանգությանը, նման տեղեկություններ պարունակող արդյունաբերական սեփականության օբյեկտների հայտերը Գրասենյակ են ներկայացնում գաղտնի փոստով՝ աշխատանքի վայրի գաղտնի ռեժիմով աշխատող մարմինների միջոցով, իսկ դրանց բացակայության դեպքում՝ համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով կամ առձեռն:

4. Արդյունաբերական սեփականության օբյեկտների այն հայտերով, որոնց համար գաղտնիության աստիճան սահմանված չէ, և որոնք նշում չեն պարունակում պետական կամ ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների առկայության մասին, Գրասենյակը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի մարտի 13-ի N 173 որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության պետական գաղտնիքի շարքը դասվող տեղեկությունների ցանկի, հայտի ներկայացման թվականի սահմանումից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստուգում է այդպիսի տեղեկությունների առկայությունը:

5. Գաղտնի օբյեկտի հայտի ուղեկցող գրությունը ներկայացվում է հայերենով, 1 օրինակից:

6. Պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկություններ պարունակող փաստաթղթերի առաքումն էլեկտրոնային փոստով կամ հաղորդակցության այլ էլեկտրոնային միջոցներով չի թույլատրվում:

7. Գաղտնի օբյեկտի հայտի փաստաթղթերում նշվում է գաղտնի նամակագրության հասցեն:

8. Գաղտնի օբյեկտի հայտի բոլոր փաստաթղթերը կազմվում և հաշվառվում են պետական և ծառայողական գաղտնիքի մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան:

9. Արդյունաբերական սեփականության օբյեկտների գաղտնագրումն առևտրային և այլ նպատակներով, որոնք չեն առնչվում պետական և ծառայողական գաղտնիքների հետ, չի թույլատրվում:

10. Գրասենյակը, գաղտնի օբյեկտի հայտի, ինչպես նաև այն հայտի քննարկման փուլում, որը սույն կարգի 4-րդ կետով նախատեսված ստուգման արդյունքում ճանաչվել է պետական գաղտնիքի շարքը դասվող տեղեկություններ պարունակող (գաղտնի օբյեկտի հայտի նյութերի պատճենը), համաձայն «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» օրենքի 13-րդ հոդվածի, Նախարարության միջոցով անհրաժեշտ տեղեկություններ է ներկայացնում պետական գաղտնիքի շարքը դասվող տեղեկությունները տնօրինելու լիազորություններով օժտված պետական մարմին (այսուհետ՝ իրավասու մարմին), ինչի մասին հայտատուն ծանուցվում է: Ծանուցումը պետք է պարունակի նախազգուշացում հայտում պարունակվող տեղեկությունները չհրապարակելու մասին՝ մինչև իրավասու մարմնում քննարկման ավարտը: Գրասենյակի կողմից գաղտնի օբյեկտի հայտի քննարկումը կասեցվում է մինչև իրավասու մարմնում քննարկման ավարտը:

11. Իրավասու մարմինը գաղտնի օբյեկտի հայտի նյութերի պատճենն ստանալու օրվանից հետո՝ քսան աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված նյութերը և տալիս գրավոր եզրակացություն տվյալ օբյեկտի գաղտնագրման և գաղտնիության աստիճանի սահմանման վերաբերյալ: Եզրակացության տրման օրվանից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում իրավասու մարմինն այդ մասին ծանուցում է հայտատուին և Նախարարությանը, որն այդ մասին սահմանված կարգով տեղեկացնում է Գրասենյակին:

12. Եթե իրավասու մարմնի կողմից տրված եզրակացության համաձայն տվյալ օբյեկտի գաղտնագրման համար բավարար հիմքեր չկան, ապա Գրասենյակը երեք աշխատանքային օրվա ընթացքում հայտատուին ծանուցում է հայտի քննարկման վերսկսման մասին:

13. Եթե իրավասու մարմնի կողմից տրված եզրակացության համաձայն տվյալ օբյեկտի գաղտնագրման համար բավարար հիմքեր չկան, սակայն հայտի նյութերը պարունակում են տվյալ օբյեկտի էությանը չվերաբերող գաղտնի տեղեկություններ

(փաստի առկայության մասին նշվում է տրված եզրակացության մեջ), ապա իրավասու մարմինը սույն կարգի 11-րդ կետում նշված ժամկետում այդ մասին ծանուցում է հայտատուին՝ միաժամանակ նշելով այն տեղեկությունները, որոնք անհրաժեշտ է հանել հայտի նյութերից: Նշված ծանուցումն ուղարկելու օրվանից հետո՝ եռամսյա ժամկետում հայտատուն պետք է սահմանված կարգով Գրասենյակ ներկայացնի հայտի ճշգրտված նյութերը: Սահմանված ժամկետում ծանուցման մեջ նշված պահանջը չկատարելու դեպքում, հայտը համարվում է հետ կանչված:

14. Հայտի ճշգրտված նյութերն ստանալուց հետո հայտով գործավարությունը Գրասենյակն իրականացնում է համապատասխանաբար՝ «Արտոնագրերի մասին» կամ «Արդյունաբերական դիզայնի մասին» օրենքներով սահմանված կարգով:

15. Արդյունաբերական սեփականության օբյեկտի գաղտնիության աստիճանի սահմանման մասին եզրակացության տրման (արդյունաբերական սեփականության օբյեկտն իրավասու մարմնի կողմից գաղտնագրման) դեպքում իրավասու մարմինը սույն կարգի 11-րդ կետում նշված ժամկետում այդ մասին ծանուցում է հայտատուին և զգուշացնում՝ պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունները չտարածելու վերաբերյալ և նշված տեղեկությունները տարածելու համար օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության մասին:

16. Եթե արդյունաբերական սեփականության օբյեկտի գաղտնիության աստիճանի սահմանման մասին եզրակացությունը տրվել է «Արտոնագրերի մասին» օրենքի 58-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն Գրասենյակ ներկայացված հայտի վերաբերյալ, ապա «Արտոնագրերի մասին» օրենքի 58-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված՝ գյուտի հայտը Գրասենյակ ներկայացնելու օրվանից հետո՝ եռամսյա ժամկետում Գրասենյակը հայտատուին ծանուցում է օտարերկրյա պետություններում գյուտի արտոնագրման արգելման մասին:

17. Արդյունաբերական սեփականության օբյեկտն իրավասու մարմնի կողմից գաղտնագրման (օբյեկտի գաղտնիության աստիճանի սահմանման մասին եզրակացության տրման) պահից, դրանում ընդգրկված տեղեկության սեփականատերը համարվում է պետությունը՝ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝ հատուցելով դրա հետևանքով հայտատուին

հասցվող վնասը: Փոխհատուցումը կատարվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներից, որի չափը «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն որոշվում է գաղտնի օբյեկտի հայտի հայտատուի և պետական այն մարմնի միջև կնքված պայմանագրով, որի տնօրինության տակ անցնում է այդ տեղեկատվությունը:

18. Արդյունաբերական սեփականության օբյեկտն իրավասու մարմնի կողմից գաղտնագրման (օբյեկտի գաղտնիության աստիճանի սահմանման մասին եզրակացության տրման) պահից գաղտնի ճանաչված օբյեկտի հայտով գործավարությունը Գրասենյակում կասեցվում է մինչև գաղտնագրված տեղեկությունների պահպանման սահմանված ժամկետի լրանալը կամ տեղեկությունների գաղտնազերծումը և տվյալ հայտի նյութերը (բնօրինակները) Նախարարության միջոցով հինգ աշխատանքային օրվա ընթացքում ուղարկվում են իրավասու մարմնին:

19. Արդյունաբերական սեփականության գաղտնի օբյեկտների հայտերը սույն կարգի 15-րդ կետում նշված եզրակացության տրման դեպքում՝ մինչև գաղտնագրված տեղեկությունների պահպանման սահմանված ժամկետի լրանալը կամ տեղեկություն-ների գաղտնազերծումը, «Արտոնագրերի մասին» օրենքի 51-րդ հոդվածով կամ «Արդյունաբերական դիզայնի մասին» օրենքի 44-րդ հոդվածով սահմանված կարգով չեն հրապարակվում:

3. ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔ ԿԱԶՄՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

20. Պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների օգտագործման հետ կապված առանձնահատկությունները սահմանվում են «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» օրենքով:

4. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԻ ՕԲՅԵԿՏԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԺԱՄԿԵՏԻ ԼՐԱՆԱԼԸ ԵՎ ԳԱՂՏՆԱԶԵՐԾՈՒՄԸ

21. Արդյունաբերական սեփականության գաղտնի օբյեկտների գաղտնիության սահմանված աստիճանի պահպանման անհրաժեշտությունը, համաձայն «Պետական

և ծառայողական գաղտնիքի մասին» օրենքի 16-րդ հոդվածի, ստուգվում է տվյալ օբյեկտները գաղտնագրող իրավասու մարմնի կողմից սահմանված կարգով:

22. Արդյունաբերական սեփականության օբյեկտի պահպանման ժամկետի լրանալու կամ իրավասու մարմնի կողմից գաղտնազերծման դեպքում նշված մարմինը պահպանման ժամկետը լրանալու կամ գաղտնազերծման օրվանից հետո՝ տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին գրավոր ծանուցում է հայտատուին և Նախարարությանը, որն այդ մասին սահմանված կարգով տեղեկացնում է Գրասենյակին: Ծանուցագրի հետ միասին նախարարությանն են ներկայացվում նաև արդյունաբերական սեփականության պահպանման ժամկետը լրացած կամ գաղտնազերծված արդյունաբերական սեփականության օբյեկտի հայտի նյութերը, բացառությամբ պետական կամ ծառայողական գաղտնիք կազմող տեղեկություններ պարունակողների (դրանց առկայության դեպքում), որոնք սահմանված կարգով փոխանցվում են Գրասենյակին:

23. Գրասենյակն արդյունաբերական սեփականության օբյեկտի հայտի նյութերն ստանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում ծանուցում է հայտատուին հայտով գործավարության վերսկսման մասին, եթե սույն կարգի 18-րդ կետում նշված, հայտով գործավարության կասեցման ժամանակահատվածը չի գերազանցում «Արտոնագրերի մասին» օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասով կամ 29-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված համապատասխանաբար՝ գյուտի արտոնագրի կամ գյուտի կարճաժամկետ արտոնագրի գործողության ժամկետը կամ «Արդյունաբերա-կան դիզայնի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասությամբ սահմանված արդյունաբերական դիզայնի պահպանության հինգ տարի ժամկետը:

24. Սույն կարգի 18-րդ կետում նշված, հայտով գործավարության կասեցման ժամանակահատվածը «Արտոնագրերի մասին» և «Արդյունաբերական դիզայնի մասին» օրենքներով սահմանված՝ հայտերով գործավարության ժամկետների հաշվարկում հաշվի չի առնվում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

27.05.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ